**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/13» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

17.09.2019թ.
ժամը $11^{00}$

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ԻՔՀ միջոցներով ապահովման բաժնի պետ, գնդապետ Ա. Հովսեփյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի սպա, մայոր Թ. Ջամղարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, կապի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զադոյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա. Ամիրյան:

Բացակայում է ՀՀ ՊՆ 31233 զորամասի տեխնիկ-մեխանիկ, ենթասպա Ծ. Մելքումյանը:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/13» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

1. Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ հավելված №3-ի (ԴԻՄՈՒՄ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման) և հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**1 Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ հավելված №3-ի (ԴԻՄՈՒՄ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման) և հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

1.1 «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ այդ թվում առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող:

«Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի, «Մեգա Էներգո» ՍՊԸ-ի, «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Կիրակոսյան Կարենի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ:

«Մեգա Էներգո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում է հավելված №3-ը: Բացի այդ հավելված 3.1-ում 50-րդ և 51-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայում են միկրոսխեմաների մակնիշները: Իսկ 12-րդ չափաբաժնում նշված չէ առաջարկվող ապրանքի անխափան աշխատունակության ժամկետը:

«ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 3.1-ում 57-րդ, 74-րդ, 78-րդ և 89-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված է «կամ համարժեք» արտահայտությունը: Քանի որ առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը:

Ա/Ձ Կիրակոսյան Կարենի կողմից ներկայացված հավելված 3.1-ում 68-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «կամ համարժեք» արտահայտությունը: Քանի որ առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը:

«Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը՝ 2-րդ, 3-րդ, 30-րդ, 31-րդ և 91-րդ չափաբաժինների մասով տարբերվում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերից, ուստի պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացվել է մասնագիտական եզրակացություն՝ համաձայն որի մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը համարժեք են վերը նշված ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 17.09.2019թ. որոշեց նիստը կասեցնել և առաջարկել մասնակիցներին՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել տեղ գտած անամամապատասխանությունները: Բոլոր մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջների համապատասխանող:

1.2 Որակավորման հայտերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 23.09.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի (6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով), «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի (64-րդ չափաբաժնի մասով), «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի (2-րդ, 3-րդ, 5-րդ, 30-րդ, 31-րդ, 90-ից 93-րդ չափաբաժինների մասով), «Մեգա Էներգո» ՍՊԸ-ի (8-ից 15-րդ, 19-րդ, 20-րդ, 27-ից 29-րդ, 32-ից 37-րդ, 44-ից 53-րդ, 65-րդ, 66-րդ, 73-րդ, 75-րդ, 76-րդ, 80-րդ, 85-րդ, 87-րդ, 88-րդ, 94-ից 100-րդ չափաբաժինների մասով), «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի (57-րդ, 74-րդ, 78-րդ, 86-րդ, 89-րդ չափաբաժինների մասով) և Ա/Ձ Կիրակոսյան Կարենի (1-ին, 67-ից 72-րդ չափաբաժինների մասով) որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/13» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո նրանց պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/13» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/13» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Ա. Հովսեփյան |
| Գնահատող, | Թ. Ջամղարյան |
| Գնահատող | Ռ. Ջաղոյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Ամիրյան |